

պատի գէմ գրքեր է հրատարակում: Իսկ Ոսկանի Մարտէլլում վախճանից յետոյ այդ տպարանը Հուսիմոյ հաւատոյ ծաւալման ժողովը յանձնեց մի կաթոլիկ հոյ քահանայի*):

Այս հալածանաց գոյժը հասաւ Էջմիածին և Յակովբ Գ. Զոյգայեցի Թոխատեցի Պօղոս եպիսկոպոսին ու դարկեց Ելվով նուիրակ, մի հնարք հնարելու, որ ոչինչ չք կարողանալով անել լատինացւոց ձեռքով արտաբուռեց

Հայք ընդ երկար մաքառելուց յետոյ վերջապէս ձուլուեցին կաթոլիկութեան մէջ. իսկ Նիկոյ 53 տարի վէմ գլորման և քար գոյթակղով թեան մնալով՝ 1681 թուին մեռաւ արհամարհուած և ատուած ամենքից և նոյն ինքն լատիններից՝ որոնք շողաքար գումէին՝ քանի որ միութեան խնդիրը վերջացած չէր, իսկ վերջանալուց յետոյ՝ սկսել էին ստեղծ

(Շարունակելի)

Յ. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՐՕՆԻ ԵՒ ԲԱՐՈՅՍԵԿԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ **).

Կրօնի՝ բարոյականութեան հետ ունեցած կապակցութեան մասին վաղուց արդէն փիլիսոփաներից, աստուածաբաններից, բարոյագէտներից և կրօնախոյզներից շատերը յայտնած են զանազան կարծիքներ և հաստատութիւններ, որոնք քիչ կամ շատ եռանդով պաշտպանութիւն էին գտնում. Յայտնի է օրինակ այն հայեացքը թէ հոգեկան կեանքի երկու ասպարիզում ոչ մի կապակցութիւն չըկայ և թէ երկուսն ևս իրարից անկախ են:

Այս տեսակ գաղափարը մենք գտնում ենք առաւելապէս բնագէտների և նիւթապաշտների եղանակների (system) մէջ. սակայն թէ կրօնի և թէ բարոյագիտութեան և բարոյականութեան պատմութիւնն մերժումէ ամեն մի քայլում այդպիսի մի կարծիք բարոյականութեան անկախութեան մասին, որը նոր ժամանակներում յաճախ արտայայտած է «Revue des deux mondes» 1864—66 մէջ զանազան յօդուածներում Պ. Բուրնուֆ և մեծ եռանդով պաշտպանած է: Նա այն հայեացքի լինելով, որ կրօնը բարոյա-

(*) Բոնի միութիւն հայոց Լեհաստ. եր. 151.

(**) Այս յօդուածը թարգմանաբար առնուածնք ուսուցչապետ Գ. Վ. Շոէլի յօդուածից.

կանութիւնից անկախ է, հաստատումէ թէ նա (կրօն) բարոյականութեան բողոքովին անձանթ է, և թէ նախնիքներից կազմակերպուած մի համոզմունք է ընդհանրութեան տեսութեան վերայ հիմնուած»։ Այս տեսակ հաստատութիւնն կարող է միայն (անձնական) ենթակայական կրօնին վերաբերել և ոչ թէ արդէն գոյութիւն ունեցող առարկայական և կամ դրական էութեան։ Սակայն պատմական փորձը մեզ պարզ ցոյց է տալիս, թէ դրական կրօնը գոյութիւն ստանալուն պէս ունեցել է մասամբ վնասակար և մասամբ փրկարար ազդեցութիւն բարոյագիտութեան և բարոյականութեան վերայ։ Նորա վնասակար ազդեցութիւնը շատ հեշտ բաղադրումէ նորանով, որ սկզբում աստուածները միայն մարդկային գաղափարներ էին և զորանցից յօրինած զանազան զարդարուն պատկերներ, այսինքն կուռքեր էին ներկայացնում։ Եւ որովհետեւ բարոյականութեան ստորին յնման կէտը կրօնական պատկերացումների մէջ աստուածների մասին պինդ պահպանումէր, ուստի կրօնը ընդհանարար շատ հեշտ կարող էր վատ բարոյականութեան սրբագործման և ամրապնդելուն նպաստել, պահանջելով զանազան տեսակ անառակութիւն, մարդազօհոթիւն, կրօնամոլութիւն և ցեղական և կամ դասակարգերի զանազան բաժանումներ և կամ թէ դրանց հոգմանաւորումէր։ Այնուամենայնիւ կրօնի փրկարար ազդեցութիւնն բարոյականութեան վերայ ընդհանուր կրօնի և կուլտուրայի պատմութեան մէջ անուրանալի է։ Մի քանի կրօններ պէտք է բարոյականութեան նախապայմաններ՝ անձնատիրութիւն, անձնուրացութիւն, այսպէս կոչուած ներքին ազատութիւն, վճռապէս պահանջ էին, նոյնպէս և հաւատք դէպի անմահութիւն, որ անիրաւացի կերպով եսականութեան և կամ եւդամոնականութեան էին վերագրում, շատ դէպքերում նպաստած է բարոյականութեան բարձրանալուն, նա շատ անգամ ամենաներգործող միջոց է եղած դէպի առաքինութիւն։ Եթէ առհասարակ մի գիտնական ճշմարիտ փիլիսոփայական հոգեբանութեան վարդապետութիւնների հիման վերայ ոչ մի հաստատուն կամք չէ կարող լինել առանց մի որոշ նպատակի վերջնականապէս հասնելուն, հետեւաբար չէ կարող և լինել բարոյական կամք առանց հանդերձեալ աշխարհի իրական պատկերացման, ուստի Հերբերտ շատ իրաւացի է ասել թէ. «Մէյն Բէժ - Իւկ-Լո-Բի-Նէէրէջ Բէժ Լ-Բ-Տիէր էն Կ-Մ-Չ Գ-Լ-Ի»։ Ըստ այսմ ճշմարիտ կրօնական հաւատքը դէպի անմահութիւն՝ կազմումէ բարոյական կամքի և արարքի գործնական անհրաժեշտ պայման։

Այս շատ հետաքրքիր կլինէր, եթէ որ կրօնի և բարոյականութեան մէջ եղած կապակցութիւնը փիլիսոփայական և կրօնա-պատմական եղանակով քննուէր։ Բայց մեր մասնաւոր խնդիրը մեզ աւելի նեղ սահմանների մէջ է դնում պահանջելով մեզանից, որ այն գործնական անհրաժեշտ կապակցութիւնը կրօնի պատմութեան դասական (klassisch) յիշատակարանի համեմատ բացատրել։ Մենք այս դասական յիշատակարանը գտնումենք Գլոսս-Է Լէր-Ն Ի-Մ-Նէ մէջ և մենք հաւատումենք որ այն բացազրութիւնը աւելի յարմար կլլինի եթէ մենք Յիսուսի լերան քարոզի խօսքերին քայլ առ

քայլ չհետևենք այլ այնպիսի տեղեր քննութեան ենթարկենք որոնք կրօնի և բարոյականութեան մէջ եղած անհրաժեշտ կապակցութեան վերաբերմամբ էական նշանակութիւն ունին:

Յիսուս՝ իւր վարդապետութեան գործունէութիւնը սկսելուց փոքր ինչ յետոյ ուսուցանում և քարոզումէր լերան վերայ իւր գեղեցիկ և հոգեշահ վարդապետութիւնն Աստուծոյ արքայութեան բարոյականութեան կրօնական որպիսութեան մասին մի փոքր խումբ ժողովրդեան: Նա մանաւանդ իւր աշակերտներին, ցոյց տալով թէ ինքն եկած է երկրիս վերայ երկնաւոր Հորից որոշուած արքայութիւնը հաստատելու (Մատթ. 5—7): Այդ գործանանալի պարզ և խոր թափանցող քարոզով արտայայտումէ մի նոր քրիստոնէական և աստուածաբանական միտք արդարութեան մասին, այսինքն: Աստուծոյ արքայութեան որդիներէ կրօնա բարոյական որպիսութեան մասին, հակառակ հրէից ունեցած զգայական գաղափարի այդ մասին: Մեզ համար նշանաւորն է, մեզ տուած կրօնա պատմական մտքերից այնպիսի տեղեր յիշատակել կարգաւ, որոնք մեր հարցի վերաբերմամբ հանդէս են գալիս: Եւ որովհետև այդպիսով ամեն պատմական քննական և մեկնողական խնդիրներ հետաքրքած ենք համարում ուստի մենք աչքի առաջ կուենենանք այն բնագիրը որ ներկայումս մեր ձեռքին է և մենք զիսաւորապէս մեր ուշքը կը դարձնենք Մատթէոսի Աւետարանի վերայ որովհետև լերան քարոզը այնտեղ շատ մանրամասն է յիշատակվում:

I.

Մեր խնդրին ուղղակի վերաբերեալ առաջին իրողութիւնը այն է, թէ մարդը—ինչպէս ժողովրդական լեզուով ասվումէ—բարոյական տրամադրութիւն ունի, կամ թէ գիտնօրէն արտայայտած, մարդու հոգու մէջ չար կամքի հետ նոյնպէս բարին և բարի կամքի հետ նոյնպէս չարն զարգանալ է աշխատում: Աերան քարոզիչը չէ ուրանում, որ մարդկային հոգու մէջ աստուածային լոյսի մի կայծ բորբոքել կարող է և նրան բարին ընդունելու համար ընդունակ է դարձնում, նա ճանաչումէ մարդու մէջ մի մեծ կամ փոքր հետք գէպի բարձր գաղափարներ. նա պարզ նկատումէ նորա բարոյական արժէքը և գործնական մտքերը, մինչև անգամ՝ այնպիսի մարդիկներէ մէջ որոնք չար են բայց այնու ամենայնիւ գիտեն իրենց որդիկներին բարի պարգևներ տալ: Այսպէս չարերը այս կարող են անել որովհետև հակառակ իրանց մէջ գտնուած չար և սխալ կամքի ուղղութեան՝ չեն դադարում մարդ լինելուց այսինքն փրկութեան կարօտ և փրկութեան ընդունակ լինելուց:

II.

Բայց աւանդ որ այդ բարոյական տրամադրութիւնը մարդու մէջ չարին առաւելապէս հակամար մեղքի և պատիր արդարութեան է փոխուած: Այս մի ընդհանուր ծանօթ, թէ և ոչ միշտ և ամեն ուրիշ ճանաչուած իրողու-

Թիւն է: Միւսնոյն մարդ կոչուած էակի մէջ, որի մէջ աստուածային Աւար-
դապետը այն հետքը գէպի բարձր գաղափարը գեղեցիկ կերպով ճանաչած է,
կայ մի ամենաճշմարիտ. թէև ծանր վճիռ—Քուք որ չարքդ էք (7, 11)—
որ անխտիր վերաբերումէ ամեն մի մարդկային ցեղին պատկանող էակին,
Այգպիսի վճիռների վերայ շատ ծանր կերպով յարձակուել են, համարելով
նրանց քրիստոնէական կրօնի մութ պատկերն և կրօնական պատկերացում-
ներից գրգռուած երևակայութեան ծնունդ: Սակայն անկարելի է ուրանալ,
որ այն մարդիկը որոնք սեին սե են ասում, Քրիստոսի քրիստոնէու-
թիւնը իրանց մէջ ունին, նրանց կրօնա-բարոյական մարդարանութիւնն
(Anthropologie) նման է Լերան քարոզչիին հետ, որ ոչ միայն պտուղը չար
էր համարում, այլ և ամբողջ ծառը հիւանդ և փշացած: Մարդու այդ
մեղանշականութիւնն երևումէ նախ այն բանում, որ ճշմարիտ արդարու-
թիւն երկրիս վերայ շատ հեշտ չիճանաչվում և թէ նա (արդարութիւնն)
ծաղրանքի և հալածանքի պիտի ենթարկուի (5, 10—11), և թէ ուսու-
թեան և վերելիչութեան, շնորհեան և ստանդարտեան լուծումն (5, 21—22
27—32), յետոյ տարբորութեան և շնորհութեան (5, 11, 33), փոքր-
է և փոքր-ութեան, նոյնպէս և ատելութիւն և թշնամութիւն այս աշխարհի մէջ
կարծես թէ մարդու արտօնացած իրեր լինէին, Ստախոսութիւնը շատ երկ-
րաւոր յատկութիւններ ունի և որպէս մի թոյն ազդումէ ամենքի վերայ,
Սուտ մարգարէներ ամբողջ աշխարհ են պտտում իրանց ինքնահասարակա-
տարանը պրոպագանդա անելու, և որքան կարելի է շատ նորահաւաններ
իրանց թակարդը ձգելու, նորա բնաւ չեն գանդաղում իրանց փտանդաւոր
գոյլի բնաւորութիւնը ոչխարի հանդերձներով ծածկել (7, 15), այսպիսով
աստուածապաշտութիւնն միայն կեղծաւորաբար ի ցոյցս մարդկան է կատար-
վում և ոչ թէ սրտի երկիւղածութեամբ ի ծածուկ (6, 16), Այս մեղքը
մի քանիսների մէջ այնչափ մեծ է, որ մինչև անգամ մեր հեղ և խոնարհ
Փրկիչը մեզ զգուշացնումէ այդպիսիների առաջ ճշմարտութեան մարգարիտ-
ներ չձգել: (7, 6):

Բայց նոյնպէս մարդկային մեղքը և թուլութիւնը երևումն այնքան բազ-
մատեսակ, որ նրանք որոնք արդէն Աստուծոյ արբայութեան արդարու-
թիւն ունին, ապահով և հաստատ չեն մի որ և է փտանդի առաջ, ուստի
նոյնը վերստին կորցնումն — աղը կարող է անհամանալ և իր ոյժը կորց-
նել (5, 13), Հաւատաւոր և կամ ճշմարտապէս կրօնականն, որն համո-
զուած պիտ լինի թէ ամեն ինչ գէպի լաւն է ծառայում, կարող է մի
շարժման յարձակուել անձնատուր լինել (6, 25), կամ թէ աշխա-
տումէ միայն անսիրտ մաքննայական ազօթքով Աստուծոն գոհացնել, Ե-
սանդն Աստուծոյ արբայութեան համար տանումէ ձգում նրան այնպիսի
պարապմուն մէջ, ուր թէ Աստուծուն և թէ իր հոգուն բարձի թող է առ-
նում, սակայն այդպիսի եռանդն ազօթքի մէջ զուրկ է ներքին ուժից և
կենդորոնացումից (7, 6—7) բայց, սորա հակառակն ևս յետ չի մնում
և շատ հեշտ կարելի է նկատել, թէ ինչպէս ծածուկ, ներքին կեանքի ոյ-

ժր և ամբողջումն առ Աստուած դէպի մեծթիքական հոգեկան անդորրութիւնն է տանում, որի յետեւ միմիայն բարոյական փտութիւն է ծածկուած (5, 15—16): Հաւատաւորներին անհրաժեշտ այդպիսի մի հոգին փորձութեան և քննութեան ենթարկուելուն պէս նախատինքի է արժանանում մինչդեռ միւս կողմից մի ապաւինող, հաւատաւոր և յուսալիր սերտ երջանկութիւնն ստանումէ միայն արտաքին գոյն և անկարող է լինում բարին չարից զանազանելու (7, 15—16): Այսպէս մենք տեսնում ենք ամեն ուրեք տխուր բայց ընդհանուր իրողութիւն, որի պատճառով երկրիս վերայ եղած ամենապղծին և ամենալաւն մեղքից քիչ կամ շատ վարակուած է, և երբեմն ևս այնպէս որ աղբ իւր համեմիչ գորութիւնը կորցնելուց յետոյ այլ ևս ոչինչ բանի չէ ծառայում բայց կմէ մարդիկներին սոնախօս լինելուն (5, 13):

Այն է Գ-ը---ը---ը---ը ընդհանուր էր---ը---ը---ը: Այժմ մտածենք մենք նորա ձևակերպութեան վերայ և կրկանենք երկու գլխաւոր ձև գ---ը---ը---ը---ը---ը---ը---ը---ը, այսինքն Աստուծոյ կրօնա-բարոյական ձևականութիւն (Formalism,) կամ մանաւորապէս գործնականութիւն (Ergismus) և ը. մտար-կրօնական հեթանոսականութիւն և կամ աշխարհականութիւն (Ethnicismus, Secularismus):

Ա). Բարոյական կրօնական ձևականութիւնը կարող ենք որոշել որպէս մի ուղղութիւն, որը մի որոշ արտաքին բարոյական ձևի կամ կրօնի կեղեի հետ կարծումէ թէ այն (կրօն) ևս ունի: Բարոյական ձևականութիւնը երևումէ որպէս Գ-ը---ը---ը---ը---ը---ը---ը---ը (Ergismus), այսինքն այնպիսի մի ուղղութիւն, որ ընդունումէ թէ արտաքին գործերը, առանց կենդանի հաւատքի, առանց իսկական կրօնականութեան, բաւականին ճշմարիտ արգարութիւն ձևք բերելու համար և թէ ըստ այսմ ոչ թէ հաւատքը մարդու արդարացման պոյժման է Աստուծոյ առաջ, այլ մարդկային բարի գործերից մինր: Այս տեսակ գործնականութեան դէմ Յիսուս մեծ եռանդով մարտումէ (5, 20) հաստատելով թէ նորա՝ որոնք կրօնն այդ ձևով ունին, չեն կարող Աստուծոյ արքայութիւն մտնել: Այս՝ իրի բնութեան նոյնպէս համապատասխան է, որովհետեւ յի---ը---ը---ը (Formalist) թէև կրօն---ը---ը, Բ-ը---ը---ը---ը---ը---ը---ը---ը չունի, ---ը---ը---ը---ը---ը---ը---ը---ը իւր թիւ---ը---ը---ը---ը---ը---ը---ը---ը: Սորա համար է որ Յիսուս ակնյայտնի է կայուցանում առաքինութեան հիմունքներ որոնք նորա ճշմարիտ կրօնի և բարոյականութեան վերայ հիմնած սրբայութեան մէջ տիրապետումն հակառակ փարիսեցիական առաքինական գործերի, այն է ողորմութիւն տայն, աղօթել և ծովագահութիւն: Նա զարգացնումէ ճշմարիտ բարոյականութեան էութիւնն, որ նորա քարոզած օրէնքի գաղափարական հոգուց և բարոյական գաղափարականութիւնից ներքին անհրաժեշտութեամբ հանգերձ յառաջ է գալիս: Փարիսեցիներ ձևական տեսակէտից, որի դէմ Յիսուս իւր Աերան քարոզի մէջ մարտումէր, ուշք էին գործնում միայն բարոյական օրէնքի և պահանջմունքի բառական նշանակութեան վերայ: Նորա բնաւ ի նկատի չունէին թէ արդեօք մարդու սիրտն լինէ և սպանութեան

քինականորութեան, և այլ մտածմունքներով, միայն թէ ձեռքը արիւնից մաքուր լինէր (5, 21), նրանց համար բողոքովին աննշան բան է, եթէ մինը միւսին շնանալու աչքով նայի, միայն թէ իրանց արտայայտած բուռն կիւքը իրագործելուց խուսափէին (5, 27), Այստեղ ամեն բան արտաքին էր—ողորմութիւն տալն վարձքի ակնկալութեան կամ մարդիկներին հաճոյանալու ստորուակաւ էր լինում, աղօթքը առանց երկիւղած սրտի և շատ խօսքերով, ծոմապահութիւնը միմիայն արտաքին ձեւերով՝ առանց իրանց հոգու մաքրութեան ուշք դարձնելու, — մէկ խօսքով ամեն ինչ ձեւականութիւն էր միմիայն երեւոյթ առանց էութեան, կեղև առանց միջուկի:

Բ. Պատիր կամ կեղծ արդարութեան երկրորդ գլխաւոր ձեւը մենք անուանում ենք հեթանոսական մտածմունք, կամ շեքսպիրական մտածմունք, աշխարհային մտածմունք, Մեր քարոզչի բացատրութեան համեմատ այս՝ երևան է գալիս շորս զանազան տեսակ յարաբերութիւնների մէջ:

1). Նախ՝ որպէս հեթանոսական (6, 19—23) որի հետեւողներն երկրաւոր գանձերի յետեւից են ընկնում, Այս տեսակ ձգտումն ոչնչացնում է մարդու կրօնական զգացումն, էութիւնն ու արարքը (6 22—23):

2). Յետոյ մասնականութեան հետ ընկերանում է հարկաւորապէս կրօնա-բարոյական անարժէքներ, մի տեսակ դրութիւն անջատման Աստուծու և աշխարհի մէջ, և կամ այն վտանգաւոր կիսաբաժանումն, որով մարդ հաւատում է թէ երկու զանազան տերէրին, Աստուծուն և աշխարհին միանգամայն ծառայել կարող է, երկրաւոր բարիքների հոգսը Աստուծոյ արքայութեան բարիքների հոգսի հետ միացնել է կարծում (6 24):

3). Բայց որովհետև ամեն բաժանեալ դրութիւն մշտական և ճշմարտապէս մարդուն գոհացնել կարող չէր, ուստի այնպիսիներին, որոնք այդ տեսակ ուղղութեան են հետևում, հանգիստում է մի երկիւղալից աշխարհային հոգս՝ մի անմտիթար յոռետեսութիւն (6 25—32), որը կեանքի և մարմնոյ պիտոյքների համար մարդիկներին ահ ու զողի և հոգսերի մէջ է ձգում, Այս յոռետեսութեանը հեթանոսական մտածմունքն է, հետևաբար և Աստուծու որդիքներին անվայել և անարժան (6, 32), որովհետև այդպիսին պիտի իմանայ, որ Աստուած, որպէս իւր ամենասիրելի և ամենակարող հայր՝ իւր բոլոր պիտոյքների համար հոգս է տարած և տանում է, Բայց եթէ մինը այդ հոգեշահ խրատը, իւր մանկական հասակում կենդանի ապաւինութեամբ առ Աստուած ի միտ չառնու և Աստուծոյ արքայութեան համար, որպէս կրօնական ամենարարձր բարիք, և նորա արդարութեան, որպէս բարոյական ամենարարձր գաղափար անբաժան և ընդ միշտ չըհոգայ (6 33—34) այն ժամանակ շատ հեշտ յառաջ է գալիս աշխարհային մտածմունքի վերջին ձեւը, օրինակ:

4) Կրօնական ազատամտութեան (Libertinismus) մի ձև, որ անկասկած ամենից վատթարագոյնն է, Այս ուղղութեան ներկայացուցիչները պարծենում էին Յիսուսի Քրիստոսի անունով, որպէս իրանց տիրոջ և վարդապետի անունով, բայց միևնոյն ժամանակ ուրանում էին նորա զօրութիւնը, թէև

Նորա Յիսուսի անունով մարգարէանումէին և զօրութիւններ էին գործում (7, 22), սակայն վերջին գատաստանի օրը Յիսուս նրանց չի ճանաչել. որովհետև նորա Աւետարանի ազատութիւնն իրանց չարութեան ծածկոյթ էին շինած և մարմնական ազատութեան փոխած (7, 23):

III.

Մինչև այժմ բացատրածից երևումէ, թէ մեղքը մարդիկների մէջ զանազան ձևերով է լինում, երբէն վերայ գործած արդարութիւնն մէջ հանդիսանալով որտեղ արդարութիւնն է, ոչ թէ ճշմարիտ՝ այլ կեղծ բարոյականութիւնն: Եւ այց կթէ պտուղները չար են: Հետեւաբար նրան բերող ծառն ևս չէ կարող բարի լինել, որովհետև բարի ծառը չէ կարող չար պտուղ բերել (7, 8): Այսպէս ծառը չար է, այսինքն ուրիշ խօսքերով, կեղծ բարոյականութիւնն բնական և անհրաժեշտ հետեւանք է կեղծ բարեպաշտութեան, ուստի այն կրօնական, փարիսական աւանդութիւնն, որ այդ տեսակ մեղք չէր ընդունում, զրան հետացնելու անհրաժեշտութեան և յաղթելու միջոցի մասին ոչ մի հասկացողութիւն չուէ: Փարիսեցիների կրօնն էր հրէական ուղղափառութիւն (Orthodoxismus) որ, որպէս բառապաշտութիւն, միայն բարոյական օրէնքի լոկ բառերի և մի քանի կրօնական ձևերի վերայ էր հիմնուած, առանց մարդկային հոգիները իսրայելական կրօնի ճշմարիտ հոգւով պտղաբերելու և խոր թափանցելու:

Մենք տեսնումանք ուրեմն, թէ ինչպէս այստեղ կրօն և բարոյականութիւն միմեանց հետ սերտ կապուած են, և ինչպէս լերան քարոզչի համար անհրաժեշտ էր, որ կեղծ, և միայն աւանդութեան վերայ հիմնուած կրօնականութեան տեղ ճշմարիտը դնէր, և միանգամ ընդ միշտ նորա սեփական անկայունութիւնը բարոյական սնանկութիւն ցոյց տար:

IV.

Յիսուս էր խօսիչ երեքսուրբէան մէջ (5, 5—16) արդէն մասնացոյց է լինում ճշմարիտ կրօնական մարդկանի անհրաժեշտութեան վերայ, որի հետ նաև սերտ կապուած է պաշտարարութեան անհրաժեշտութիւնը և վերադին ծնանելն (7, 15—17) հիմնուելով մեղքերի խառնութեան վերայ: Յիսուս ներածութեան մէջ նկարագրումէ (5, 3—12) նախ ինն կրանութիւնների մէջ այնպիսիների կրօնական գրութիւն և բարոյական բնաւորութիւնն, որոնք Աստուծու արքայութեան որդեկրութեան մասնակից կարող են լինել, նորա մի և նոյն ժամանակ ճշմարիտ բարեպաշտ և ճշմարիտ բարոյական մարդ պիտի լինին, որովհետև Աստուծոյ մօտ մի կողմից ուղիղ, կրօնական սրտի մաքրութիւն և միւս կողմից այդ սրտի մաքրութիւնից հարկաւորապէս յառաջ եկած վարքը նշանակութիւն ունի: Ա՞յլ կարող էր արդէն այստեղ հենց Լերան քարոզի սկզբում՝ կրօնի՝ բարոյականութեան հետ ունեցած յարակցութիւնն ուրանալ, Այլ չէ տեսնում և զգում, որ Յիսուսի պարզ արտայայտած կարծիքի համեմատ միայն նա է արժանի երկնային արքայութեան քաղաքացի լինելու՝ ով որ մի և նոյն

ժամանակ թէ առ Աստուած և թէ առ մարդիկ ունեցած պարտք խղճի մըտօք կատարած է. իսկ այս պարտքի կատարումն յառաջ է գալիս ուղիղ սրտի մարբութիւնից և բարւոյրութից և հենց զրա համար է որ ամենից առաջ գորս մասին է խօսուած: Աստուծոյ որդիք կրօնական մարդիկը, պէտք է ամենից առաջ հոգւով աղքատ լինին (5, 3), այսինքն իւր սեփական անարժանաւորութիւնը Աստուծու առաջ ճանաչելուն մէջ համեստ: Այս գլխաւոր առարձիկութեան համեստութեան հետ շատ նեղ կապուած է խոնարհութիւնը, որ հիմնուած է ամբարտաւանութեան և հպարտութեան բացակայութեան վերայ և որոնք հոգւոյ աղքատութեամբ գորս են հանուած յետոյ ցաւ՝ իւր ճանաչած անձնական անարժանաւորութեան վերայ (5, 5), որիչ խօսքերով լուրջ, ճշմարիտ և հիմնական ուղիւն, որ կրօնական ասպարիզում կազմուէ սկիզբն ու անցողական կէտ դէպի Աստուծոյ որդիքութիւնը, Եթէ միանգամ ապաշխարութեան պատրաստ միտքը վերադառնումէ հոգու մէջ, այն ժամանակ արդ է ք-ր- (5, 6), որպէս թախտական պահանջ դէպի Աստուծոյ արդարութիւնը՝ անյադ չեն մնալ: Բայց ինչքան որ մարդկային հոգին երկրաւոր իրերի մէջ երկար խորուսուզուած է, սկզբում այնքան նա հեռացած է այն ծարաւը զգալուց. նա կարծումէ թէ աշխարհային իրերի զուարճութիւնների, հաճութիւնների, փառքերի և ուրախութեան մէջ իւր համար գոհացում կարող է գտնել: Սակայն այս բոլոր աշխարհային բաները նման են մի ոսկեգործուած շղարշի, որ ծածկումէ թշուառութիւնն ու խեղճութիւնը, և եթէ այդ շղարշը քամին բարձրացնէ և հոգին յինքն գայ, կը գտնէ հոգու խորքերում մի տեսակ թախտի, որի պատճառը շատ անգամ մարդ ինքն ևս գժուարանումէ, և գրեթէ տկարանում բացատրել: Այդ նորանից է յառաջ գալիս, որ Աստուած մարդուն ստեղծած է յախտնականութեան համար. բայց մարդ հազիւ թէ գիտակից է լինում թէ՛ իրեն կրած ցաւը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կարօտ՝ առ յախտնականութիւն: Աւստի երկիւնք և երկիր որքան էլ մեծ և փառահեղ լինին, չեն կարող մարդկային փոքր բայց անվերջ մեծ սիրտ լցնել. ոչ մի աշխարհային իր կարող չէ նորան յարատե գոհացնել և զուարճացնել, որովհետեւ նա այս աշխարհից վեր է ձգտում և թախտում, նա ծարաւումէ առ կենդանի Աստուած որ միմիայն մարդկային հոգու ծարաւն յագեցնել կարող է, միսս բաների մօտ նա լքանում և թուլանումէ և միմիայն Աստուծոյ մօտ է գտնում ճշմարիտ հայրենիք, նա այս աշխարհի համար շատ անիւ և շատ բարձր է:

Այս առաջին չորս երանութիւնների մէջ (5 3—6) կրօնական ու քաղաքական ոչ երբեք անգամ այս օրէնքից ինչ կերպով իբր անհոգութիւն է: Այստեղ պահանջուած ապաշխարութիւնն թէ և կրօնական շղ-ն է պատկանում, սակայն շատ խոր է թախտացում նաև քաղաքական սահմանի մէջ: Աստուծոյ կայ արդեօք մի այնպիսի բարոյական հաստատուն քայլ, քան այն, որ ճշմարիտ ապաշխարութեան միջոցով է լինում: Չկայ արդեօք իւր անարժանաւորութիւնն ճանաչելուն և ախտասլ-ւն մէջ մի բարոյական դժ, ինչ տեսակ մե-

ճութեամբ էլ դա մարդիկներին մօտ կարծուի։ Աւ վերջապէս եթէ մարդ իւր հոգեկան և բարոյական օժանդակութեան կարիքը ճանաչելով մի խոր թախիժ առ աստուածային արդարութիւն զգումէ, այսմի՛թէ Բարոյական կեանք և կրօնական ինքնէն չէ, Կրօնականութիւն և բարոյականութիւն իրար հետ սերտ կապուած չեն։ Քաղցն ու ծարաւն աւ արդարութիւնն մի հաստատ նշան ևն իսկական կրօնական մտածմունքի։ Եւ ուր որ դա կը գտնուի այնտեղ բարոյական պտուղներ յետ չեն մնալ։ Ինչպէս որ այս հետեւեալ տնից հետեւումէ՝ ճշմարիտ կրօնական սրտի հարսնութիւնն պէտք է իբրև համարաբանական Բարոյական պտուղ, կրօնականութիւն և կամ աննշան կրօն պէտք որ հարսնութեան կրօնական պտուղ Բարոյականութեան յարմար բերէ։ Այս երևումէ նախ զարմանալիք մէջ (5, 7) կամ ողբամանաւորտ սիրոյ մէջ առ մերձաւորն, յետոյ նկատելի է նա սրտի հարսնութեան մէջ (5, 8)։ Այս կէտից ևս շատ պարզ երևումէ կրօնի և բարոյական լիճեան յարակցութիւնն, ի հարկէ այն չափով որչափ որ յԱստուած հայեկն այսինքն կրօնական ինքնագործութիւն Բարոյական սրտն է։ Ս. գրքի այն ճշմարիտ վճիռն՝ թէ « եթէ որ կամի զկամս նորս (այսինքն Աստուծու) տանել, գիտասցէ վասն վարդապետութեանս (Յիսուսի) յԱստուծոյ իցէ արդեօք « եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ » (Յովհ. 7. 17-9-31) մեզ հանդիպումէ նաև Աւրան քարոզի մէջ, Արեւմն աստուածային բաները պէտք է բարոյապէս սիրել՝ այսինքն պէտք է Բարոյական անձնատուր լինել, որպէս զի նրանց կրօնական ճանաչել կարողանանք, որովհետև ով որ Աստուծուն չէ սիրում, նա Աստուծուն ևս չէ ճանաչում։ Մի քանիսն գիտակցութիւն Աստուծու մասին խիստ մտքով դուրս է ձգուած, « Ընդէր զխօսս իմ ոչ գիտէք » հարցրեց Յիսուս մի անգամ հրեաներին (Յով. 8. 43) և յետոյ իւր տուած հարցին ինքն է պատասխանում հետեւեալ խօսքերով « Որ էն յԱստուծոյ, զբանս Աստուծոյ լսէ և դուք վասն այնորիկ ոչ լսէք զի չէք յԱստուծոյ (8. 47)։ Այս խօսքերի մէջ երևումէ իսկական կրօնի հակապատկերն զէպի միակողմանի բանականութիւնը, որ զուտ մտածողական ճանապարհով կամենումէ ամեն գաղտնիքներ հաստատել, Քայց Յիսուսի խօսքին նայելով, ոչ թէ զուտ մտածողութիւնն է՝ որ մեզ Աստուծուն տեսնելու ընդունակ է դարձնում, այլ մաքուր սիրտը (5. 8)։ Միմիայն մաքուր սրտի պարզ աչքով է որ կարողանումն երկնային ճշմարտութիւնների աշխարհը տեսնել (6. 22-23)։ Մինչդեռ զուտ բանականութեան բարձր թռիչքը չէ կարող մեզ դէպի ճշմարտութեան յաւիտեանական աստղերը տանել, Հէնց սորա համար է որ կրօնական կեանքի կենդրոնում բարոյական գործ պահանջելի է, որպէս զի Աստուծոյ ճշմարիտ գիտակցութեան հասնել կարողանանք։ Արեւմն մենք բարոյապէս պիտի հաւատանք, Եթէ այդ բարոյական առասանները մեզանից պակասէին, մարդկոյին ամբարտաւանութիւնը ո՛ր չպիտի բարձրանար։

Կրօնից հարկաւորապէս յառաջ եկող բարոյականութիւն երևումէ նաև և բացի մտքի մաքրութեան, իրաւունքի գաղափարին համարապատասխանող Բարոյականութեան մէջ (5, 9), որ գալիք հնարուոր վէճի առաջն ասնումէ և

ծագած վէճը որքան կարելի է շուտով հանդարդեցնումէ և վերջապէս Աստուծոյ որդեգրութեան ընդունակութեան մէջ հաւատով և մխիթարուած տանի ամեն ինչ Յիսուսից մեզ հասած կրօնական և բարոյական մտածմունքի համար ուրեմն իւրեանց գէժ թշնամարար վարուող աշխարհի հետ մի ճշմարիտ բարոյական վարք ցոյց տայ և պահպանէ (5, 10—12)։

Յիսուս իւր խօսքի շարքում ք. 5—16 (5, 13—16) նկարագրումէ կրօնաբարոյական շարք և ծնը ինքիւր, որը նորս աշակերտները որպէս Աստուծոյ արքայութեան անդամներ աշխարհի համար և աշխարհի մէջ ունին, Այդ խնդրի ձեւից և տեսակից շատ պարզ երևումէ, որ Յիսուս կրօն և բարոյականութիւն միշտ իրար յարակից էր մտածում, Օրինակ, աշակերտները երկրի աղը պիտի լինին (5, 13)։ Այս բաների մէջ շատ պարզ արտայայտուած է Յիսուսի աշակերտների խնդիրն, Ինչպէս օրինակ — ինչպէս զի քան է, այնպէս ևս ճշմարիտ բարոյական և կրօնական մտորիկն երկրիս վերայ, որոնց ամենամեծ խնդիրն այս է, որ աշխարհը կրօնաբարոյական տպականութիւնից պահպանեն, Նոքա այդ խնդիրն պատմական զարգացման ընթացքում ընդհանրապէս բաւական լաւ կատարեցին, Նոքա, որպէս Յիսուսին հետևողներ և յաջորդներ, աշխարհը թափանծեցին կրօնի և բարոյականութեան դադարաբական նոր հոգեով, առանց այդ խնդրի՝ կատարումն գրեթէ անհնարին էր, Յետոյ, այդ խօսքի մէջ է կայանում «...»-ը, որը ինքն ինքն ընդհանրապէս ինչ տեսակ նիւթերի հետ ևս խառնուած լինի, այնպէս ևս Յիսուսի ճշմարիտ բարեպաշտ աշակերտներն իրենց կրօնաբարոյական վարքի և բարքի վերաբերմամբ մտորիկներ են, իրանց համար աշխարհիս մէջ և ոչ թէ աշխարհից, Աշխարհի մտրմնական և վատ զգայական և չար էակ ուրանալու և յաղթելու զօրութիւնը կայանումէ նորանց հաղորդուած, նոցանից հաւատարիմ՝ պահպանուած, անարկայապէս ընդունած և անձնականապէս ըստ կարելւոյն կատարելութեամբ իւրացրած կրօնական ճշմարտութեան՝ երկնաւոր մտածմունքի մէջ, որովհետև նոքա իրանց հայրենիքը և հայրը երկնքումն ունին, Այդ երկնաւոր հայրը ապիս է նորանց զօրութիւն ոչ միայն իրանց և ուրիշի մեղքերի գէժ կոռուելու, այլ և յաղթելու և ամեն անցական բաներ երկնային մտքով սրբագործելու և բացազրելու, Ով որ երկրայինն է մտածում, նա աղ չէ, այլ նոքա՝ որոնք իրանց քաղաքացիական իրաւունքն երկնքում ունին, երկրի անհրաժեշտ աղ են, և հետևաբար ցոյց կտան նոյնպէս նման յատկութիւններ հոգեկան մասնաւորապէս, կրօնաբարոյական ասպարիզում, ինչպէս որ աղը՝ ֆիզիքական ասպարիզում, այսինքն մի քիչ կծու, սուր, լուրջ յատկութիւններ, հակառակ հեթանոսական աշխարհահայեցողութեան և բարոյականութեան, մի քիչ էլ պարզապէս և համեմող ընտանիքի, համայնքի, եկեղեցոյ և պետութեան նկատմամբ, վերջապէս մի քիչ էլ միացնող և անխղի յատկութիւններ, Միմիայն նրանք, որոնք աղ ունին, այսինքն բարձր պաշտանը կարող են իրանց

ձեզ խաղաղութիւն պահպանելու և մեն տեղ ուր իրօք կրօնապէս և բարոյ-
 յապէս քրիստոնէական կրօնին ազատ հետեւողներ են գտանվում, որոնք
 հրահանգութեան, այսինքն աստուածային Ս. Հոգւոյ կրթիչ առաջնորդու-
 թեան, որպէս միակ բարոյն տակ են կանգնած և նոքա փոխադարձաբար
 միմեանց խրատում են եղբոր պէս այնտեղ աճում են Իւզուր-Բեւե և ճշմարիտ
 Բարոյ-Կանոն-Բեւե սիրոյ պարտաւորութեանը որոնք ընդհանուր է և ներկայիս ամենից
 առաջ գտնվում է յաշխարհակոնութեան գաղափարում ճշմարիտ կրօնա-
 կանութեան մէջ որ մարդիկներին իրանց Աստուծոյ հետ ամենասերտ կեր-
 պիւ միացնում է և յս պատճառով թէև Աստուծոյ ժողովուրդը կարող է
 մեռնել բայց նորա ներքին կենդանի ոյժը, հաւատքը սէրը և յոյսը ոչ
 և յս մտքով շատ ճիշտն է ասել պ. Արնդտ որ հաւատքը հզօրների մօտ
 յաշխարհական է միայն թոյլն՝ անաստուած կլինի։

Հէնց հալածանքի կրակը պարզ ցոյց տուեց Քրիստոսի աշակերտների հա-
 ւատը իւր ամենաբարձր զօրութեամբ և որքան նոքա Յիսուսի սիրոյն հա-
 մար ամեն տեսակ նեղութիւններին և շարժարանքներին ետանդազին էին
 հանդիպում, այնքան աւելի յայտնի էին լինում որպէս կրօնա-բարոյա-
 կան աղ, որ աշխարհի մէջ շարութեան և զգայականութեան բոլոր ոյժը
 յաղթահարում է որովհետև Քրիստոսի եկեղեցին արիւնով միշտ նորածին է
 դառնում և ամեն մի փոթորիկ նոր բոցեր է բորբոքեցնում, Աւրչապէս
 այդ խօսքի մէջ մի վտանգ կայ որին ճշմարիտ կրօնականները երկրիս փրկոյ
 ենթարկուած են, Ատանգը նրանում է, որ քրիստոնէականները իրանց ներքին
 ոյժը, հաւատը, իրանց անձնական կրօնը կորցնել կարող են, Բայց որովհետև
 հաւատը, կրօնականութիւնը նրան ընդունակ է դարձնում աշխարհին յաղ-
 թեղու, ուստի նրա (հաւատի) հետ միասին կրկորցնեն նաև այդ ընդունա-
 կութիւնը, և կենթարկուեն մի և նոյն կրօնա-բարոյական ազդեցութիւնն
 շրջականողների ապականութեան մէջ՝ ինչով որ աշխարհս ըմբռնուած է, Սո-
 րա համար պէտք է որ միշտ առ Աստուած տպաւինել և չը թող տալ որ
 աշխարհի գայթակղեցուցիչ հրապոյրները և գրգիռները իրան կուրացնեն ի-
 րանց մէջ իշխող մեղքի զօրութեամբ։

Այսպէս որքան ճշմարիտ Բարոյ-Կանոն-Բեւե և Իւզուր-Բեւե և Գրքի Բարոյ-
 նաև Բարոյ-Կանոն-Բեւե Մի և նոյն հետեւանքն է յառաջ գալիս Յիսուսի գործ
 դրած միւս պատկերից.— Աշակերտներ աշխարհի լոյս պիտի լինին (5,
 14—16), մի կողմից որպէս ամբողջութիւն, ինչպէս մի քաղաք լեբան վե-
 րայ, միւս կողմից հատ հատ որով նոքա իրենց ճրագը ոչ թէ գրուանի տակ
 պիտի գնեն, այլ աշտանակի վերայ՝ որպէս զի տան մէջ բոլոր եղածները կա-
 բողանան տեսնել, Արեմն նոքա թէ առանձին առանձին և թէ ամբողջու-
 թեամբ, պէտք է աշխարհին իրանց ճանաչած և հաւատով ըմբռնած ճշմար-
 տութիւնն թէ խօսքով և թէ գործով տարածել, որպէս զի ուրիշներն ևս
 նրանց բարի գործերով առթուած, իրանց երկնաւոր Հօրն փառաբանել սօ-
 վորին (5, 16)։

Յիսուս իւր Աւրան քարոզի ներածութեան մէջ կրօնական զգացում և

ճգնութեան կարօտութեան մէջ է կայանում:

Աւր Աստուծոյ սէր չկայ, այնտեղ չկայ նա և առ մարդիկ, այլ միայն միմեանց դէմ պատերազմ: Մարդասիրութիւնը առանց աստուածսիրութեան տանումէ ընդ միշտ դէպի անասնականութիւն. և այդպէս կոչուած անկրօն բարոյականութեան պաշտպանները բնաւ չեն կարողանում այդ հայեցակէտի վերայ հաստատ մնալ: Ահա այսպէս, ամբողջ իօսքի միջով շարունակ այն միտք է անցնում կարմիր թիւի նման, որ ճշմարիտ էր այն ժամանակ, երբ ճշմարիտ էր թիւի ճշմարտութիւնը: Սորա համար է որ Տէրն ասումէ (6, 33), ամենից առաջ պիտի Աստուծոյ արքայութիւն խնդրել, նրան անգամակից լինել կարողանալու համար: Այլ որ այս անպէտք է համարում, զրանով ցոյց է տալիս իւր կատարեալ անհասկացողութիւնը հետեւեալ տեղերի 5, 22, 25—26, 29—30, որ նա այն ընդարձակ ճանապարհն է ճանաչում, որ ի կորուստ է տանում (7, 13), որ նա հանդերձեալ գատաստանի օրուայ և հաշիւ տալու մասին բնաւ գաղափար չունի: Աւ որովհետև Աստուծոյ արքայութիւնը ոչ ոք չի մտնիլ, լինի դա նոր ծնուած ուստի բացի ապաշխարութիւնից պէտք է նաև վերստին ծնուիլն այս ինքն ամբողջ ներքին կեանքի այնպիսի մի յեղաշրջումն, որով մարդ մի նոր, բարձր և լաւագոյն գոյութեան սկզբունք է ստանում: որպէս զի նեղ գոնով դէպի կեանք տանող նեղ ճանապարհին հասնի, բայց աւաղ, քիչերն են գտնում և այդ շաւղով քայլում (7, 13—14): Այլ որ մի բարոյական մարդ գտնալ է ուզում և երկնքի արքայութեան արդարութիւն, այսինքն, Աստուծոյ սուրբ կամքին համապատասխան բարոյական գաղափարների հասնել, նա պէտք է—այս ոչ թէ կատեգորիական, հրամայական է, այլ հոգեբանական անհրաժեշտութիւն—այդ կրօնական ճանապարհով քայլի, նա պէտք է մի բարեպաշտ, վերստին ծնուած մարդ լինի, որովհետև չար ծառը բարի պտուղ չէ կարող բերել (7, 18): Իսկ վերստին ծնանիլ կարող է մարդ մեղքերի թողութեամբ (6, 12) որ հաւատով պիտի ըմբռնուած լինի, ուրիմն և հոգեբանական գործողութեամբ, որով կրօնականը և բարոյականը սերտ իրար հետ կապուած են:

V.

Այս բոլոր ասածներից շատ պարզ երևումէ որ ներքին կեանքի այդ երկու վայրկեանները, այն է, Արօն և Բարոյականութիւն միմեանց հետ սերտ կապուած են, և վերջապէս այս երեւումէ առանձնապէս «Հայր մեր» ի առաջին երեք խնդիրքից (6, 9—10), եթէ մինն լերան քարոզչի հետ միասին քննէ Աստուծոյ արքայութիւնը, որպէս Աստուծոյ ամենաբարձր և բարոյական նրպատակ, որպէս աստուածային նպատակայարմարութեան միջոց տիեզերքի վերաբերմամբ այն է, բոլոր էակների կատարեալ գոհացման, կենդանացման, ներդաշնակեցման և բարոյականացման համար այն ժամանակ պարզ կը տեսնի, որ մարդ առ Աստուած ունեցած փոխադարձ երախտագիտական սխրուց գրգռուած, պէտք է այն երեակայական ամենաբարձր նպատակին ծառայէ, նա

պէտք է աստուածային, բացարձակ բարոյական աշխարհակարգութիւնն բարոյա- նպատակայարմարական հաւատով ընդունէ, իւր սեփական կեանքում Աստուծոյ մաքուր սիրոյ կամքն և կամ նորա բարոյական սիրոյ նպատակը առ մարդկութիւն, որ կրօնական շարժառիթներից դրդուած պիտի իւր սեփական բարոյական կամք դարձնի և նոյնը թէ իւր և թէ իւր նմանների մէջ աշխատի իրականացնել, որպէս զի մարդիկների կրօնա-բարոյական ձգմամբ բոլոր Աստուծու արքայութիւն, որպէս բոլոր հոգիների, մարդիկների իրար մէջ և Աստուծու հետ ունեցած կատարեալ ընկերակցութիւն, վերականգնուի, Եթէ այս՝ տեղի ունեցաւ, այն ժամանակ ոսկէզար կը գայ բոլոր հոգիների համար, որի մէջ կրօն և բարոյականութիւն ոչ թէ առաջուայ պէս այնպէս յաճախակի բաժանուած, այլ միանգամ ընդ միշտ իրար հետ կապուած կլինեն, Եթէ բոլոր ասածներս ի մի ամփոփենք, կը տեսնենք որպէս հետեւանք, թէ մենք, և թէ Լերան քարոզչի խօսքերին հետեւել ենք ուզում, շպիտի համարձակենք այն բանը, ինչ որ Աստուած իրապէս—ոչ տեսակա- նապէս—միաւորած է՝ անջատել, բարոյական ասպարէզը կրօնական շրջանից իրապէս բաժանել, Ի հարկէ, պէտք է որ մի էական զանազանութիւն դնել բարոյագիտութեան, որպէս զուտ ձեականութիւն ճշմարիտ գիտութեան և գործնական բարոյականութեան սկզբունքների մէջ, որովհետև գործնական բարոյականութիւնը մեր բարոյական արարքի սկզբունքն է կազմում, ուստի այդ տեսակ բարոյական օրէնքները, ինչպէս է. Գրոցիուս ևս իրօք նկատած է, այն ժամանակ ևս արժէք ունին, « եթէ որ ընդունէինք թէ Աստուած չը կայ (ինչ որ ամենամեծ անաստուածութիւն կլինէր) » Etiamsi (quod impiissimus esset) daretur, deum non esse. Այսպէս է նկատում նաև աղնիւ և լուսաւորեալ Սաուրին, թէ՛ « Աւետարանի օրէնքներն ունին մի ներքին, յաւիտենական արդարութիւն, որ անկախ է մեզ նրանց տուողից » Les lois de l'Evangile ont une justice intrincéque, essenticlle et indépendante de celui, qui nous les donne. » Եւ ընդ հակառակն այլապէս է լինում բարոյականութեան հետ ինչպէս որ Յիցերոն իւր « յազագս բնութեան աստուածոց ի մէջ աստուակէ. « Ես հաւատումս, որ եթէ բարեպաշտութիւն առ աստուածները դադարի, այն ժամանակ մարդկային ցեղի հաւատարմութիւնը և ընկերութիւնը և ամենափառաւոր առաքինութիւնն ու արդարութիւնն ևս կը դադարի » (De, nat, deor. 1—2): “Haud scio an, pietate adversus deos sublata, fides etiam etsocietas generis humani et una excellentissima virtus, justitia tollatur,, այս բացատրութիւնն անշուշտ հաստատվումէ Քրիստոսի լիբան քարոզի մէջ յիշած խօսքերով: